բերենք օրինակներ այս յօդուածում մեզ հետաքրքրող մատենագիրներից, որիւնի այժմեան տըպագրում կայ այս հատուածը «որոց (տպ. որոց) յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոյն և բաղում շնորհագիր հարց՝ յետ այնը աւանդութեամբը, և նիկիական և եփեսոսական կանոնօք գայիս, երկելով աշխարհին հայոց» (21). մեր վերեւ յիշած ձեռագիրը (№611) ընդգծուած բարսի փոխարէն ունի հայ յոց վլիպակ ընթերցուածը։ Այսպիսի շփոթութիւն հնարաւոր է միմիայն երկամագիր օրինակում։ և այն այնպիսի գրչութեան մէջ, որի ուղղագրութիւնը առանց յ-ի է, ևման մեր ձառընտիրներին [ՀԱՅՈՑ=ՀԱՅՑ, երկամագիր Ի և Ո տառերի կատարեալ նմանութիւն], նոյն բառի շփոթութիւն տեղի է ունեցել և Արքահամ Խոստովանութիւնի մէջ մարդմատութեանց մէջ, պօղելով պատմական մի բացօրոշ ակնարկութեան իմաստը։ Մարութան ձառելով «Արակաստանի քրիստոնեաների կրած հալածանիները Շամուհից աւելացնում է. «Արդիք հայոց \* վշտատեսաց կոխան փղաց և ևրիվարաց լինէին, քանզի արքին և նոքա զարժակն գառնութեան. որոց նեղեալ և ճգնեալ գերին ի ձանապարհին և յաւմեւանս կողովէին ի սովոյ և մեռանէին։ Յայնպիսի ամս շարս և անուղայս, զորոց այլայլցն զյաւրինեալ կարգն մարդիկ անաւրէնք, յայնպիսի շփոթ և ի գառն ժամանակս, զորս շփոթեաց իշխանն ազատութեան, Արելք (=Պարկաստան) հպարտացեալ ամբարտաւանէին, Արեմուտը (=Բիւզանդ. կայսերութիւն) խոնարհեալ հնազանգէին, Հիւսիւսի (=Հայաստան) տապասանիկեալ կոխէր, Հարաւ (=Ասորեստան, Ասորիք, Պարսկաստանի քրիստոնեայք) ի պարտութիւն մատնեալ վատթարէր, Գեաւզք աւելէին, քաղաքք կործանէին, ազգք հնազանգէին և աշխարհք վատնէին։ (Ա. և Բ. ձառընտ, նաև Սոփերը հայկ, Հատ. 1, եր. 94)։

\* Տպագիրն ունի հարց, մինչդեռ իմ ծառընտիրներ սրբուն էլ հայոց, որ սնթագրում է նախնական ընթերցուած։ ՀԱՅՑ, երկաթագրով, որից միայն եւ կարող է թագել տպագրի սխալ, ՀԱՅՑ ընթերցուած։ Եւ հատութը համեմատի Փատոսի Դ. գլ. ԺԸ. ՅԱՀԱԳՍ գիրութեան եւ հարուածոյ աշխարհն հայոց եւ աեքրածոյն եւ գնործեան տանելոյն ի Պարսս։ Նաև գլ. ԺԸ, որմեղ ասում է. եւ ածին ժողովն ին առաջի թագաւորին Պարսս։ Եւ զամենան զին եւ զմանուկ հանել ընդ ցից սայմաց։ Փատոսի եւ Ագր. Խոստովանողի յարաբերութեան ինդրին մնաց վիրաղառնալու առին կունենանց որից անգամ։

Նոյն պատճառից առաջացած աւելի հետաքրքրական շփոթութեան օրինակ կարող է համարուել Պ.ազարի այս հատուածը, Պարսից թագաւորը հրովարտակ գրելով Հայերին թողնել քրիստոնէութիւնը և ընդունել մագերի կը-րօնը՝ ասում է. «Երդ լուեալ ձեր զմեր հրամանուրդ, կամաւ և սիրով յանձն առէք, և բնաւ ամենակիմք զմիտս ընդ այլ ինչ մի տանիք, Ա.Յ. և այս կայ մեղ և մեղ, զի և զկարծեցեալ զձեր օրէնսդ՝ առ մեղ գրել հրամայեցաք»: \* Ակներեւ է, որ այստեղ բնագիրը աղճատուած է, որովհետև Պարսից թագաւորը ոչ մի հիմք չուներ իւր հրամարտակում իրան մեղագրելու, որ Հայերից պահանջել է քրիստոնէական կրօնի մասին տեղեկութիւն: Խմ գտած Պ.ազար Փարացու միակ օրինակը, որից լոկ արտագրութիւններ են՝ և այն ընդմիջարկութեամբ և սխաներով Ակնետիի և Էջմիածնի օրինակները \*\*, շատ յաջող կերպով վերականգնում է ուղիղը, տալով մեղ ճիշտ նոյն ընթերցուածը, միայն հին ուղղագրութեամբ (այն է առանց յ-ի). Ա.Յ. և այս կա մեղ և մեղ, որ պէտք է կարդալ այսպէս՝ Ա.Յ. և այս կա մեղ և մեղ, զի և զկարծեցեալ զձեր օրէնսդ առ մեղ գրել հրամայեցաք»: Աւելմն ակներեւ է ուղղագրական տարրերութիւններից առաջացած վիթպակների կարեւորութիւնը: Ըեշտելով այսպէս այս կէտի վրայ, որ ուշագրաւ է միայն բանասիրական տեսակետից, աւելացնենք և այն: որ չընչուող յ տառի յապաւումը բառերի վերջում կարող է ունենալ և գործնական նշանակութիւն: Մեր կարծիքով շատ նպատակայարմար կլիներ աշխարհաբարի մէջ ընդունել այդ ուղղագրութիւնը, գրելով «ծառաւ, քահանա, վանածով, ևլն, ինչպէս որ գրում ենք «ահա, նա, նրա, Աննա, Եւրոպա, ասա, զնա, ևլն, Ա.Յ.պինով կունենանք մի գիւրին և հաստատն կանոն: Խսկ դիրութիւնը, որ շփոթութիւններ չե ծագեցնում: շատ և շատ գնահատելի բան է, մանաւանդ մեր հանգամանքներում եղող ժողովրդեան համար, որ օրից օր աւելի և աւելի զրկուում է իւր մայրենի լեզուն սովորելու հարաւորութիւնից և միջոցներից: Խամանաւանդ որ այսպիսով մենք վերականգնած կլինիք աւելի հինը—այս վերջին փաստը պահ

պանողականների համար է—և որ և է նորմութիւն արած չենք լինիլ:

\* \*

Աւելի կարեւոր սրբագրութիւններ կարելի էր անել մեր հրատարակած բնագրում: աչքի առաջ ունենալով ասորի բնագիրը:

Դժբաղդաբար ինձ հնարաւոր չեղաւ: բաղդատել այս հայ հին թարգմանութիւնը ասորերէն բնագրի հետ, չգիտենալով ասորերէն, չունենալով ձեռքի տակ ոչ լատին և ոչ նոր լեզուներով ասորի բնագրի թարգմանութիւնը, ուստի և այդ բաղդատութիւնը մնում է ձեռնահաններին: Սակայն Մ. Աւգերեանը իւր Ա.իակատար Վարդ Սրբոցում, (Հատոր Բ, 437) ի միջի այլոց օգտուել է և Ասեմանից, որով միջոց է տալիս մի քանի բաղդատութեանց: Ա.Յ. նպատակին մասմբ կարող են ծառայել և հայ Յայսմաւուրը \* և մանաւանդ Գուրիասայ և Սամանայ (Գորիա և Շմոնա) վկայաբանութեան հայ երկրորդ թարգմանութիւնը, ամենայն հաւանականութեամբ կատարուած յունարենից (տե՛ս Վարդ և Վ.կայաբանութիւնը Սրբոց: 1874 Ակնետ. հատ. Ա, եր. 273): Սակայն այդ բոլոր բաղդատութիւնները թողնելով ասորի բնագրի հետ համեմատել յանձն առնողներին, նկատենիք այս չափը, որ մեր ձեռագրերի տուած ընթերցուածներում թերևս միայն Մարգեգետման գիւղի անունը աղճատուած լինի (Երկրորդ թարգմանութեան մէջ՝ Սարկիդիմա: յունարկնում ըստ Աւգերեանի՝ Սարկիդիմուա: Հայերէնում կարող է լինել Ս և Մ տառերի շփոթութիւն): նոյնպէս թուած է թէ մեր հրատարակութեան՝ Տ եղի գիւղ-կէի կ-զ ա ասացուածը յատուկ անուան թարգմանութիւն: Աւգերն ունի Վ.իթլակիկղոս կամ Բեթէլարկլայր: =Բէթէլկիկղուած:

Յամենայն դէպս Գորիա և Շմոնի վկաների Շմատակնակը Եխատակը ենթագրում է մի այնպիսի ասորերէն բնագրի: որ կամ չորրորդ և կամ առաւելն՝ հինգերորդ գարու սկզբին էր գրուած, ուստի և հայ թարգմանութիւնը ունի այդ հին վկայաբանութեան նախնական բնագրիը վերականգնելու գործում: Հատ

\* Պ.ազար Փարագ. Պատմ. Ակնետ. 1894, եր. 156:

\*\* Ցնս այս մասին իմ ծանօթութիւնը Երբակացու հրատարակութեանցս մէջ, Արարատ ապրիւ եր. 203, ծան., 1896:

\* Իմ գործածնեցն է մեր մատնադրամի (Գ. 8.) Ա. 371 ծեռագիրը, գրուած Ուշիր-1713 թուիքն: տես նոյնմբ. Ժն.

հաղուազիւս ևն քըիստոնէութեան առաջին դարերից մեզ հասած—անաղարտ և առանց յաւելուածների—յիշատակարանները, Յայտնի է բանասէրներին, թէ ինչ մեծ աղմուկ հանեց, և ինչ կարևորութիւն ստացաւ գիտնական աշխարհում մի այդպիսի յիշատակարան—Ապոդոնի վկայաբանութեան անգղերէն թարգմանութիւնը (Հայերէնից) \*. Ոչ նուազ ինքնուրոյն կարևորութիւն ունի և այս վկայաբանութիւնը, հայ մատենագրութեան մասնական ինդիրների լուծման համար:

\* \*

Գանք այժմ մեր ճառընտիրներին:

Առ մեր գրատան թիւ 936, 5 ձեռագիրն է, Կարինեան Յուցակի Ա 916, 5+Կաշեկազմ՝ 53+34 հրմոր, արտաքին կողը, ձեռակ թերթերի մեծութիւնը 52+32 հրմոր. Թուղթը, տեղ տեղ կարկատուան, երբեմն լուսանցքները կտրուած կամ կարկատուած, տեղ տեղ ցեցակեր և թացութիւնից բարակուած, այսուամենայնիւ ընդհանրապէս լաւ պահպանուած: Միջին կամ ստորին երկաթագիր, այրը եռատամն, Կրուած իջի մեծութիւնը 38+21 հրմոր, երկու սիւնակ, սիւնակի մեծ. 38×10, տողերի թիւը 38, 37, 41, 42 ևն, Բառերը շատ անգամ անքառ անքառ մի մեանցից, Ակզրից և վերջից 2—2 թերթ թղթեայ պահպանակ, երկաթագիր, բովանդակութիւնը ճառընտիրի հատուածներ, Զաքարիա Սարկաւագը, իւր ժամանակին նորոգել է այս ճառընտիրը, սկզբում գնելով բովանդակութեան ցանկ, միջում զեւելով Յովիշաննայ վանքի կոնդակը \*\* և վերջում իւր յիշատակա-

րանը, \* Աերջից ճառընտիրը թերի է, որով և գրչի յիշատակարանը կիսատ է մնում, Այս է այդ թերատ յիշատը. Եր. 560-ի Քազում նեղութիւն կրեցի ես Յահանն էս նուաստ գրիչ ի սուրբ Գրիգորիս, ոչ մարմնոյ վաստակ կամ նեղութիւն, այլ մտաց և խորհրդոց, յաղագս աւրինակի այս ճառից, քանզի եղայր ոմն կաթա-

\* 561a Յիշատակարան ճառընտրիս (Խօսոր գիր)

«Փառք եռաշիւսեակ տէրութեան և եզակի աստուածութեանն, համապատիւ և միանական սուրբ երրորդութեանն, յաւիտեանս յաւիտենից, ամեն:

Որոյ ամենակարող զօրութեամբն եղեւ նորոգումն ճառընտրիս ի սպանիլ ժամանակիս և ի վերջին դարուս, ի նուաստանալ աղգիս Հայոց և ի բազմանալ Պարսից, որոց ազգի աղգի կեղեքմամբ և պէսպէս հարկապահնութեամբ տառապեցուցանեն ողբերմիլ կեանս մեր, ի թուին Ռերորդի ճերորդի և Զեակ թուոյ (1136-1687), ի Ճերորդիս Նըրարտանեան, ի գաւառս Անդրբուու, որ Ժուտին Վրագածնու, Հանդէպ Վրայու, մերձ ի գիւղաքաղաքն Կարբի, ի վերայ կարկանահու և ծիծաղաւալ գետին Քասաղու, ի կատարս բարձրութեանց վիմացու, ի գերահաշակ և հրաշափառ սուրբ մենաստանի ի Սիւղի վանաց, որ ստուգաբանեալ կոչի Յօհաննու վանք, ընդ հովանեաւ մեծի ամլորդուոյն սրբոյն Յովիշաննու Կարապետին, և Մատթէոսի աւեւարանից, և Պարաման զգնաւորի և Գրիգորի սուրբ Լուսաւորչի պանդակէոնի թժկի, և զամբարանաց սուրբ Հօրն Երեմիայի, Սարգսի վարդապետի և Աշէէ իշխանի, շնորհի սուրբ Կաթուղիկէիս, և այլ միայեղէն սրբոցս, ի թագաւորութեան Պարսից շահ Սուլիմանի և յիշխանութեան տանս Վրարատեան Զալ խանի, և ի կաթողիկոսութեան Հայոց որ ի սուրբ Էջմիածին Տեառն Եղիազարու, և առաջնորդութեան սուրբ ուխտիս Սարգիս վարդապետի Կարբեցոյ, Զեամար ամենաթշուառ և եղեռնագործ Զաքարիա աղկազի և տրպի Քանաքեսցոյ, անուանը ևեթ սարկաւագի, Վանորյ աղաշեմ առ պրասնունդք որդիկը լուսածնունդ զաւակք սրբոյ աւազանին կաթնարյած մանկունք սուրբ Լուսաւորչին, ընծայեալք ի գրուն սրբոյ Կարապետիս, զի որը Ընթեռնուք զամ յիշենջիկը ի մաքրափայլ և աստուածընկալ յազօթս ձեր զայնուիկ, որք ունին աշխատան և երախտիս ի վերայ սուրբ ուխտիս նախ զաքարիա քաջ բարունապետն մեր, զառաջին առաջնորդն, որ նորոգեաց շեկեղեցիսն և արարարին բարձրումն և արար աղասու արբունակ Յագաւորականօք ի պարսկաց, թէ այգի, թէ հող, թէ ջրաղաց, թէ համաղաց, թէ րինձաշան, թէ չորբուանիք, թէ խաչն, և զոր ինչ և գոյր զամենայն ունիմք և զայելեմք, եւ զինի նորա Յօհաննէս վարդապետ յաջորդ նորուն, որով մնոյց զմեղ կաթամբ հոգկորք Յիշեցէք զնասա առ Քրիստոս յոյսն ամենեցուն, Եւ նայժմու առաջնորդ Յարգիս վարդապետ, որ բարուոք կառավարէ զմիարանն և շահինով զերթեեկոն ըստ բերմանց

\* The Apology and Acts of Apollonius, and other Monuments of Early Christianity; F. C. Conibeare, London 1894. Բացի բազմաթիւ գիտնական քննադատականներից, հրատարակուած մասնագիտական թերթում, տեսն նաև Rundschau-ի յօդուածը. SIC ET NON. Neue Actenstücke aus der Zeit der Christenverfolgungen, von Paul Hohrbach. Deutsche Rundschau, April, 1895.

\*\* Մի ցամի պակաս նոր գրատարակուած Զաքարիայի Պատմութեան մէջ՝ Էմիածին (1870, դ. Հատոր: Նոր հրատարակութեան ժամանակ անքածնաշ է լրացնել ապ ճառընտրից:

րոս, \* որոյ անուն Խոյլենց Յովանէս Ճանաչի, ոռոյ իւրն էր աւրինակ, մեծ գիրք, ոչ տայր ի գաղափար, կարծեմ վասն նախանձու, և յորժամ վանքս և հայրն ետ՝ նա զշարեալ գայր յափշտակել, իսկ ես ողբանաւք ինդրէի, հազիւ կարացի գրել իրեւ Ճառ, և ապա խլեաց և տարաւ և Բ տետրն ան-

\* Այսինքն է սուրբ, մաքուր Աղանդաւրոնների անոն է եւ այստեղ գործ է զրուած նեղութեամբ:

ամանակի, որում տէր լիցի օժանդակ, նա և բոլոր միաբան ուխտիս, որ զեսեղեալ են ի գոդ սուրբ Կարապետիս. զԴրիգոր երաժիշտ վարդապետ, զծերունի սաղմոսօց տէր Սարգիսն, զնորընճայ տէր Կարապետն, զտէր Յովաննէսն, զտէր Յօհաննէսն, զտէր Խոկանն, զփակակալ Կարապետն, զՁաքարիայն, զԱստուածատորն, զԱրկադէոսն, զԴաւիթն, զՄարգարէն, զԿէրորդն, զՅարութիւնն, զԱրքահամն, զմիւս Մարգարէն, զՄելքիսեմն և այլ միաեղէն մանկունք եկեղեցւոյ թուով ի, եւ զմարմնաւոր գործակալք զերկանուն Մօսէս-Աստին և զՊետրոս խոհագործքն. զԱրքահամ և զՍուջհատին աշխատաւորք զՄարկոս և զՎբահամ միայնակեացք. Եւ այլք որբ ունին զերախտիք տանս, եւ զէ ամեայ մանուկ Յօհաննէսն, որ մանկութեամբ իւրով սպասաւորէ ծերութեան իմաւմ և հանգուցան զհօգի իմ որպէս Սամուել զԾոգին և զգեայ, ուսանելով զուսումն առատուայն, քաղաքայն սաղմոսելով որպէս ծիծառն, եւ զհամաշունչ եղայր իմ զՄերկնելցի մելիք տէր Սարգիսն, որ է գաւառապետ նահանգին Կարրեց, և զորդի նորա Սահակ, և զՅօհաննէսն որում զրեցաք, եւ զծուզոն իմ զՄկրտիչ և զԽանարդայ և զեղբայր իմ զՊատրիք. Հուսկ ամենեցուն իրեւ զկղկղանս համարելով զնեքաւով \* Զաքարիայն, որ եմ վարտ և աղազուն ի մէջ եկեղեցականաց, որ ի գեղջէ Քանաքեռոյ, որ եկեալ բնակեացայ ի զերափառ սուրբ մենաստան Յօհաննու-Վանից ամ ՞՛, անհաճայ քաղաքավարութեամբ, և անարժանութեամբ ընկալայ աստիճան արշի սարկաւագութեան. բայց ի բարեկարծութեանց ամփուր և ունայն Սահայն զմտաւ ածի զառացեան ի մարգարէն, թէ Երանի որ ունիցի զաւ. և անսուս բարբար բերանցոյն Քրիստոսի, թէ գանձեցէ ձեզ գանձ յերկինն եւ ես տեսի, զի ոչ ունիք գանձ և ոչ զաւակ սակայն նորհեցայ ստանալ զաւակ այսինքն զգիւեան հինս և վաղեմիս, որ վատթարացեալ էին, առնել և նորոգել որպէս և Ճառընտիր այս, որ հնացեալ և անկեալ կայր և բաժանեալ զծուղմն ի միմեանց վասնորոյ սիրտ իմ մէկտայր տեսանելով զաս այսպէս, և ոչ գոյր իմ ինչո զի տայի Ճարտար նորոգողաց վարձս, զի նորոգեցեն, Սակո որոյ առեալ ի ձեռս ըստ տղիւտութեան իմում կարկատեցի, և ոչ գոտի օրինակ զի զկարկատեալն գրէի, որպէս և զվերջն մծուղմն Յօհաննէս պատմութեանն, այլ թողի այնպէս. իսկ գուք սիրելիք սուրբ Կարապետիս, յորժամ գտանցէք օրինակ՝ զրեցէք զպական և զգեր յիշատակն ես ընդ նմին գրեցէք, զի և սակաւ յիշատակն

դիր մնաց. իսկ իմ տարակուսիալ յանձ ապաւինեցա. յանկարծ պատահեաց զիրք մի տաւնացուցակ ... Յովհաննէս զրչի անունն առիթ է արուել թիւրիմացութեան, Զաքարիան իւր յիշատակարանում գրում է ի միջի այլոց և ոչ գտի օրինակ, զի զկարկատեալն գրէի, որպէս և զվերջն մծուղմն Յօհաննէս Գրչի յիշատակարանը անուանում է «Յովհաննէս պատմագիրն», որպէս երեխ ի ցուցակագրութեան Զաքարիանը (Յիշատակարանը), այլ թողի այնպէս. իսկ գուք ... յորժամ գտանիցէք օրինակ՝ զրեցէք զպական» (տես ծան. մէջ Զաքարիայի յիշատակարանը). Զաքարիան թիւրիմացութեան առիթ է տուել նաև նրանով որ իւր կազմած ցանկում (Ճառընտիրի սկզբում) Յովհաննէս Գրչի յիշատակարանը անուանում է «Յովհաննէս պատմագիրն» և յարձն յիշատակարանը (Ճառընտիրին) ... լեալ է... և Յովհաննէս պատմագիրն, որպէս երեխ ի ցուցակագրութեան Զաքարիայի, այլ ձեռն անհագաղաց բարձեալ է զայն ի տիրութիւն սրտի ցանկացաղն հնազրութեան նորունց (եր. 85). Կարող ենք միմիթարուած լինել, որովհետեւ այդպիսի կորուստ տեղի չէ ունեցել և Զաքարիայի նորոգածը շատ քիչ վնասներով հասել է նոյնութեամբ մեր ձեռքը.

2-իստաց ո լն է Առուրեն կուսակրօն քահանան. Գրութեան տեղն է Սուրբ Գրիգոր ամենայն հաւանականութեամբ Սաղմոս ավանք ք (տես Ի Ճառընտիրի յիշատակ և տուաք ի Սամուսավանք յիշատակ մեզ և ծնողաց մերոց, ի զարդ եկեղեցեաց սուրբ Գրիգորիս, Աստուածածնիս ևլն) 2-ում շատ տեղ յիշուում են զրիշն ու ստացողը. Կուսանցքներում իրեւ զարդ կան մանրանկարներ, սրբերի պատկերներ, պապկայ (թութակ) թռչուն (եր.

մեր մի կորիցէ ի դրանէ սուրբ Կարապետիս, զի ես զոր ինչ կարացի զայն և եթ զրեցի, նաև զայս ծանիք, ով անփակի հարազատ իմ, զի սովորութիւնն է տպէտ և խելագար եկեղեցականաց, զի զուսանց զրոց և մանաւանտ թէ զպատկերս հանեն կտրելով ի գրոցն, որպէս զայս զիրքս, որ բազում կարկատանօք հազիւ կարացի նորոգել, Վասնորոյ օակս միրց սուրբ Կարապետին և յուսոյ արքայութեանն մի առնիցէք այնպէս, զի մի լուիցէք զանէծս. այլ խնամ արկանել և պահել, որպէս որ որ գմայ հոգոյ իւրոյ, եւ ահա յայս արարի ձերում աստուածասէր անձին և գուք ընթեռնուով զկիրքս զպակատութիւն սորա լցէք, ասելով տէր ողորմեան նոցա որբ ունին երախտիք ի վերայ սորա. և մանաւանտ մեղսամեալ և ստորասուզեալ Զաքարիան սարկաւագի, զի նա որ տառան է ողարմութեամբ ողորմուցի այնոցիկ որբ կարդան առ նաւ, որ է օրինեալ անհաճայ արարածոց իւրոց, և նմա փառք յաւիտեան յաւիտենից ամէն, Ճառընտիր և Մարտիրողոց անուն,

\* Այսինքն է կազ:

74b), կապիկ պպղած, ձեռքը ծաղիկ (եր. 276a), կապիկ ծառի լիրայ (եր. 344a), Յիշում է և զրի եղբայրը՝ Սուքիաս քահանայ (եր. 208b, և եր. 497a), եր. 301a «Էւ ես մեղուցեալ և անարժան ի կրաւնաւորս Խուրեն», որ և տրուպ ամենայն եղբարցու, որք կան ընդ հովանեաւ սուրբ Կարապետիս ի Աւանս Յոհանու, յիշել հայցեմ որք կարգայք. ևս և զյետին զրիչս զմեղաւորց, Ուրեմն Խուրեն քահանան Յովհաննու. — Աւանից վանական էր, շատ մօտ Սաղմոսավանքին: Այս ճառընտրի գրչի՝ Յովհաննիսի քաշած նեղութիւնները իւր միարանակից Խովհաննէսի ձեռքից երևի շարունակուել են և յետոյ: Եր. 532a, ստորին լուսանցքում կարգում ենք. «կարի շտապով գրեցի, զի զաւրինակն խլէին, զՅովհաննիսի Խովհենց»: Ուրեմն Ճառընտրի վերջին մասերն էլ ընդօրինակուած են Խոյլենից օրինակից: Եր. 532b ստորին լուսանցքում «վայ քնոյս», որից երևում է, որ գրիչը շտապում էր ընդօրինակութիւնն ամբողջացնել: Եր. 536a «Այ վայ ի քիթս ածին աւրանակիս տէրքս»: Այս արեղայական կոփւները, վեճեմ վասն նախանձու», ուրեմն շատ հին բաներ են, Յիշենք նաև Պազար Փարպեցու թուղթը: Այս թէ որտեղ կարող ենք ասել. Ոչինչ նոր ընդ արեգակամբ:

Այսպիսով որոշում է՝ գրիչը (Յովհաննէս), գրութեան տեղը (Սաղմոսավանք), ստացողը (Խուրեն կուսակրօն քահանայ) միարան Յովհաննու Աւանից), օրինակը որից արտագրուել է մեծ ճառամբ (Խոյլենց Յովհաննիսի), մնում է անորոշ ժամանակը:

Ճառընտրիս գրութեան ժամանակը չէ կարող ներսէս Շնորհալուց առաջ լինել, քանի որ ունի ս. Սարգսի (տես Սոփերք Թ. Զ.): և ասորի Պարսամու վկայարանութիւնները (տես Զ.արք. Թարգ. Նախ. 725) և ոչ ուշ Զաքարիա Սարգաւակից, որ նորոգող և վերստին կազմողն է, Գրչութեամբ, թղթով, զարդերով յար և նման է Բ ձեռագրին, ինչ ինչ առաւելութիւններով (աւելի գեղեցիկ և հմուտ զրչութիւն), ուրեմն և ժամանակակից Բ ձեռագրին, հաւասականարար նրանից փոքր ինչ աւելի կանուխ, ինչպէս ներքեւում պիտի տեսնենք՝ Փ. Ք. Դ գրում զրուած: Զաքարիան նորոգել է հայոց Ո.Ճ.Զ. թուին, այդ ժամանակ ձեռագիրը Յովհաննու վանքում էր, այսինքն նոյն այն վանքում, որի համար զրուած էր, Ո.Ճ.Զ. թուին (=1709 Փրկ.), մի տիրացու տեսել է այս ձեռագիրը նոյն տեղում՝ և արձանագրել նոտր զրով «Էւ Յեղվարդցի տիրացու Կիկողայոս», որ եկի Ուհանավանք թվին Ո.Ճ.Զ.-ին,

ամսեանն օգոստոսի Խ-ին», լուսանցքագրութիւն եր. 273b: Երևի նոյն վանքումն է արձանագրել և մի ուրիշը, մի քահանայ, մեր ժամանակակից քահանաների հմառութեամբ: «Էւս անարժան Կիրակոս քհանայս օչրնվեցա թվին Ո.Ճ.Զ.-ին: և ամսեանն մարտի մէկն, և իմ գուս գտնի էր ապրիլի Է-ն: և տօն էր Ավետայց, և օրն էր դ շափափ: քրիստոսի փառք յավիտեան ամեն (վերջին եր. 562b, նուարը): \* Ենայց ձեռագիրս տեղափոխուել է Էջմիածին և մտել Մայր Յուցակը, Գորիայի և Ծմոնայի վկայաբանութիւնը այս ճառընտրում սկսում է եր. 454b անմիջակես կից և շարունակութիւն Արքահամ Խոստովանողի թանկագին հատուածներին: Հրատարակութեանս մէջ թէ այս Ա և թէ Բ ճառընտրիների երեսները խնամքով նշանակուած են:

Ա Ճառընտրի մանրամասն բովանդակութիւնը տես Կարին Յուցակ, եր. 85—88:

\* \*

### Բ Ճառընտրի.

Այս ճառընտրիը մեր մատենադարանի թիւ 939, 6 է, Կարին, Յուցակի № 919, 6: Ամեն բանով (Նիւթ, գրչութիւն և լին) յար և նման Ա-ին, Սկզբից պակաս կ ճառ և Ե-դի սկիզբը: Ճառընտրիս մանրամասն բովանդակութիւնը տես Կար. Յուց. եր. 99—102: Բ-ի յիշատակարաններն են. եր. 21b. «Զ.ստացող սորա զՄարկոս կուսակրաւն քահանա յիշենչիք ի տէր, ընդ նմին և զաղկաղկ գծողս», եր. 96b. «Զ.ստացող սորին զՄարկոս կուսակրաւն քահանա յիշենչիք, ընդ նմին և զծրողս ծերացեալ ալեւաւք և մեղաւք»:

Եր. 107b. Զ.ստացող գրոցս և զգծող Ճառիս զՄարկոս յիշենչիք.. Յայսմ աւուր, որ կատարէք զյիշատակ սուրբ Յակոբիս՝ արարեք զդ աւր պատարացն ի յիշատակ մեզ, և թէ պակաս հանդիպի: մին այլ աւրն լմնեսցի, զի կատարաւդքն աւրհնեսցին: Եր. 115b. ստոր, լուսանցք. «ով աւրինակ դատեցեր՝ զի չես ի բանի», եր. 135a. «Զ.Մարկոս և զհարազատ եղբայր իւր զՄիթմար յաղաւթու յիշենչիք. Եւ զրազմամեզ գծողս զՄիթմար, զի կարաւաւ եմ սուրբ աղաւթից, զի սաստիկ վիրաւը բեաց զիս գեն: Եր. 173a. «Ով սուրբ ժողովք, ա-

նոյն գրով, աս անարժան նվաստ հոգի զուացագրէն և ար ս ե ց ի յայսկէն (յազգէն) գոշի Մհակչքի որ եմ որդի յօվագիմի, տէր ողորմայ նւմա:

սացեք Քրիստոս աստուած բարեխաւսութեամբ սրբուացը ողորմեա գծողաց սորա Միհիթարա և Մարկոսի մեջապարտի: Եր. 192ի. «Զմեղապարտ գծողս Մարկոս և զհարազատ եղբարբ իմ զՄիհիթար և զԱհանենէս զփոխեալն ի Քրիստոս և զամենայն ն[ն]ջեցեալն մեր յիշեսջիք ի Քրիստոս յոյսն մեր բարեխաւսութեամբ սուրբ կուսանացս...» (Խոշոր երկաժամկով) Զմեղապարտ ծաղկողս յիշեա աղաչեմ: (իւր սոլորական գրչութեամբ) — «Յետինքս ի կրաւնաւորքս և առաջինքս ի մեղաւորքս» ես Մարկոս և Միհիթար ստացաք զգիրս զայս բազում աշխատութեամբ, զի գերեցին զմեղ և ալափեցին և տարան ի Դուին և զման ի սմանէ ընդ մեզ զոր գրամագին արարեալ դարձուցեալ, կատարեալ կազմեցաք ձեռամբ մերով և տուաք ի Յաղմոսավանք յիշատակ մեզ և ծնողաց մերոց ի զարդ եկեղեցեաց սուրբ Քրիդորիս, Աստուածածնիս, կարապետիս և Գեորգա զաւրավարիս: Եւ կատարացեն ամ յամէ ի տարին Գ աւր ժամ, ի տաւնի սուրբ Յակովին: Որք կատարենն աւր Հնեցին, իսկ որք անփոյթ արացեն, աւաղ, զի պատժեցին: Մանաւանդ որ եկեղեցապանն ե կատարեցէ, զի մի դատապարտեցի, և զժամն վաղ զարժուցէ, զի վճարեցին մեծ ձառք, որ ի սմա Եւ եթե որ յեռացուցե զսա ի Յաղմոսավանաց զինչ և է պատճառաւ՝ մասն նորա ընդ Յուղաի եղիցի և ընդ Կաենի, և նզովք զաւձին ժառանձեսցէ:

Զեղբայրն մեր Քառասունքն կրաւնաւորական կարգաւք պատուեալ, որ զիւթ կազմութեան սորա երեր ի Տիֆեաց և զաւդ և կոճակ յԱնո: յիշեսջիք ի Քրիստոս և տէր յիշողացդ ողորմեսցի:»

Եր. 204ի. «զՄարկոս զստացիչ գրոցս և զհարազատ եղբարբ իւր զՄիհիթար և զՅոհանենէս... ընդ նմին զտիմար գծողս զՄիհիթար...»:

Եր. 260ի. «Քրիստոս աստուած թող զյանցանս Մարկոսի և եղբարց և ծնողաց իմոց և համես քեռն իմո Սառաի, որ տղա հասակաւ փոխեցաւ ի Քրիստոս:» \*

Եր. 313ա. Նոր թանաքով ստորին լուսանցքում: «այս դին առաջին դարձի գերութեան մերոց, զօր գերեցաք յաւտար աղդաց:»

Եր. 319ա. «Մինչ յայս ճառի էի, յամենեանն

\* Եր. 286ի, մախ լուսանցքում: մինւնյն գրշով: «վայ ի լուսն եւ ի մթանես», որից կարելի է հնտեցնել, որ Ապարանի լուերը այն ժամանակն էլ նոյնշափ համբաւատր էին, որշափ այժմն: կան ժողովրդական երգեր այդ լուերի մասին:

Հրոտից: որ աւր Ա եր և առաջին ծնընդեան պահոցն, եհաս բարկութիւն սաստիկ յաստութց ի վերա մեր յաղագս ծովացեալ մեղաց մերօց, զի արք (ամբ) ամբարիշտք չարախաւսեցին զմենջ ի Պուլին եթե զողի հաց են տուեալ և յանկարծ եհաս զաւրք հեծելոց ի վերա մեր, որ եաք հնագ հողի բանկել յաշապատ, ոչ գործելով զդրութանպատի, հալածեալք եղեաք: Որոյց ձերակալ արարեալ զՄիհիթար, զԿիրակոս, զՊաւղոս, զՍտեփանոս յիւրաքանչիւր ինցիան, զի ժամ եր ձերաբին և զամենայն կենաց մեր զպատճառ յաւարի առեալ տարան ի Դուին, զիս միայն մոզով յաղագս տկառութեան իմու, զի առ կարձեալ եր և ոչ կարեի ընթանալ: \* Եւ տարեալ զնոսսա ի տեղի պատուհասին, զի ի փայտ ելանիցին: այլ գթածն աստուած: որ ոչ խոպան բարկանա, հասեալ յաւգնականութիւն դարձուց յայնմ չար ինորհրդոց Քանդարգել (ալ) արարեալ խոշտանկեին բազում տանջանաւք ի[ն]չս խոստանալ: ամսաւրեալ աւուրբք տանջեալք: . Ա. գահեկան զլուխ կապեալ: Զոր բարեպաշտ աստուածաեր ամենաւր Հնեալ որբեայրի կին մի Մարիամ և Տիկին անուն, նմանեալ մաւրն աստուծց: որով (=որոյ) զանուանակոչութիւնն ունի: նաև զվար նորա, որ զայն աւուրբք դարմաներ զնոսսա ի բանդին, որո տացէ տէր հարիւրապատիկ և զվարձս նորա ի գալստեանն իւրում, ամեն:

Զոր և զայս մասն գրած գերի առեալ վարեցին զինի: Զոր և իմ: Մարկոսի տկար մարմնով հետամուտ եղեալ ի նոյն դդեակն, և ամսաւրեալ աւուրբք պանտընացեալ (sic) զրամագին արարեալ զայս և զաւրինակ սորին և այլ ևս զրեան, զարձուցի բազում նեղեամբ, Այդ աղաչեմ զամենեսեան՝ զմեղ և զիշեցեալքս ի մենջ և զծնողն մեր յիշեսջիք ի Քրիստոս և տէր ձեղ ողորմեսցի: Եր. 479ի. «զպատուական եղբայրն մեր Թաւմա, որ զաւրինակս ետ և զմեղապարտ գծողս և ծնողս մեր յիշեսջիք ...»

Ա. յս յիշատակարաններից մանրամասն տեղե-

\*\* Հետաքրքրական զուզաղիպութեամբ այս ճառընտիրները վիճակութել են կարեցին եւ անդամալուծներին: Ոչ միայն վերջին ուստանափրուս, այլեւ եւ Բ ճառընտրի գրիշը՝ Մարկոս, նմանապէս եւ Ա ճառընտրի նորդողն ու կազմող՝ Զաքարիան կաղեր էին եւ կաթոնալ ուսիւք: Վերջինս իրեն անուանում է Ն եքաւով փարաւոնի անունով, որ Նշանակում է կաղ: (տես Զաքարիայի նորոգութեան յիշատակարանը):

կանում ենք ձեռագրի կարեօր պարագաներն, Սա աց դն է Մարկոսը, գրիչներն են նոյն Մարկոսը և եղբայրը՝ Միհիթար, Առաջինը անհամեմատ աւելի վարժ, գիտուն և յաջող գրիչ է, քան երկրորդը՝ Գրութեան տեղն է Սաղմոսավանք, կամ Ճշտագոյն և Սաղմոսավանքի անապատը, \* Իրմա օրինակ է ծառայիլ է «Թօմա եղբօր» Ճեռագիրը, նիւթը, այն է թուղթը, բերուած է Ցփղիսից, օղակ և կոճակները՝ կազմի համար՝ Անուց, Նախնական կազմը, օղակներն ու կոճակները չկան այլն, այժմեանը նոր, անջուք կազմ է, հասարակ կաշուց և տախտակից, Հատ հետաքրքրական են գերելարութեան հանգամանքները, Թէև չկայ թուական, սակայն մօտաւորապէս կարելի որոշել գրութեան ժամանակը, Այդ չէ կարող կանուխ լինել Հայոց ՈժԶ (1167) և ՈժԹ (1170) թուականներից, Այս թուեն յիշւում են ճառընտրի մերջում գտնուած մկայաբանութեանց մէջ, \*\* Գոշի անունից (տե՛ս ծան.) կարելի էր հետեւ մերևս, որ այս ճառընտրիը ԱԿԲ (1213) թուականից (Գոշի մահուան թուականը) յիտոյ է գրուած: Քայց այդ անկարելի է, որովհետեւ Գուլինը յիշւում է այլազդին երի ձեռքում: Նոյնպէս և Սաղմոսավանքը, \*\*\* Իսկ Զաքարէ սպասալարը տիրեց Սաղմոսավանքին և շրջականներին 1200 թուին, որից առաջ է անշուշտ ճառընտրիս գրութեան ժամանակը, երբ Սաղմոսավանքը գեռևս Գուլինի իշխանութեան սահմաններումն էր: \*\*\*\*

Քայց կարելի է գեռ աւելի ևս սեղմել այս 30 տարուայ անջրպետը (1170 - 1200), աւելի մօտենալով ճառընտրի գրութեան բուն տարեթուին: Վերևն առաջ թերուած գերեվարութեան յիշատակարանում առուած է: «յամեանեան հրոտից, որ աւր առ եր, և առաջին ծնընդեան պահոցն, եհաս բարկութիւն սաստիկ աստուծոյ ևլն: Այս խօսքերից հետեւմ

\* Կաթօնմ վանցից փոքր ինչ ցած, մասադի ծորում:

\* Յովսէփ Թուրք վկայի եւ Խոսրով Գանձակեցու գեղեցիկ վկայաբանութիւնները, որոնք լսոյ կտեսնեն միասին: Սրանց վերջում կայ եւ Միհիթար Գոշի զրուատը՝ ներբող ասցեաւ ինոր վկայան, կոչեցնալու Խոսրովը: Ղժբաղաբար Թերատ: (Ժեռ-ի վերջին թերթն է 484): Այս երեք զրութիւններն էլ բոլորովն ու ոք բաներ են:

\*\*\* Ուրիսն Գոշի ներբող մտել է ճառընտրի մէջ նոյն իսկ Գոշի կենաւանութեան ժամանակ, որ տարօթինակ բան չէ, աշքի առաջ ունենալով Միհիթարի սրութեան եւ զիտնականութեան մօն ամբաւը ժամանակակիցների աշցում:

\*\*\*\* Տնի Զաքարէի Շաղոյն արձանագրութիւնը իմ ՆՄՏՈՒ յօդուածում 1895 Արարատ, Ը: Կայ եւ արտատպութիւն, եթ. 5:

է, որ ճառընտրիս և նրա գրիչների գերեվարութեան ձմեռը—զի ժամ էր ձմեռախն—մի այնպիսի տարի էր, որ Ծննդեան պատի առ աջին օրը ընկանում էր հրոտից ամսի մէկին: Ուրիշ խօսքով, բռն Ծննդեանը, յունուարի 6-ը, գալիս էր հրոտից 8-ին, իսկ յունուարի մէկը, այն է նոր տարին՝ հրոտից երեքին: Իսկ նաւասարդի մէկը էր կհանդիպէր 32 օր յետոյ (27 օր հրոտից ամսից, 5 օր աւելեաց=32), ուրեմն՝ փետրուարի երեքին:

Այսպիսով ուրեմն այս Բ ճառընտրի գերեվարութեան տարին—երբ կիսից աւելին զրուած էր (318 թերթ), մնացածն էլ մի ամսից յետոյ շարունակուեց գրուել—, մի այնպիսի տարի էր, որ նաւասարդի մէկը էր կարող կանուխ լինել Հայոց ՈժԶ (1167) և ՈժԹ (1170) թուականներից: Այս թուեն յիշւում են ճառընտրի մերջում գտնուած մկայաբանութեանց մէջ, \*\* Իսկ այսպիսի տարիներ են 1185—1188 քառամետր ականքին և այդ թուերին միայն կարող է գրուած լինել այս ճառընտրիը: —Հայոց ՈՂԴ—ՈՂԵ, թուերին: \*\*\*

Այս ճառընտրի մէջ պահուած Սաղմոսավանքին վերաբերեալ յիշատակութիւնները մեր ունեցած հնագույն տեղեկութիւններն են: Ալիշանի և Այրարատում՝ առաջ թերուած արձանագրութիւնները սկսում են հազիւ ուրեմն ժամանակից մէկում և պակասում են միւսում: Բայց աւելի նորագոյն հատուածները ունի ուշի և համանականաբար Ակից ուշ է ժամանակից: Թէ իրեւ գրչութիւն և թէ լինթեցուածների ուղղութեամբ անպայման ընտրելագոյնն է Ա-ը, որն և ծառայեց մեզ իրեւ բնագիր: Բ-ի ընթերւցուածները նշանակուեցան լուսանցքում: Ան հասել է մեր ձեռքը գրեթէ ամբողջ, թերի է մնում միայն վերջին յիշատակարանը, նորոգուած թերթե-

\* \*

Այս ձեռագրերի բաղդառութիւնից հերկում է, որ Ա և Բ ճառընտրիները տար բրենմերի ներկայացուցիչներ են, և ման բայց ոչ նոյն բովանձակութեամբ: Կան վարքեր կամ ճառուր, որ գտնում են մէկում և պակասում են միւսում: Բայց աւելի նորագոյն հատուածները ունի, ուստի և համանականաբար Ակից ուշ է ժամանակից: Թէ իրեւ գրչութիւն և թէ լինթեցուածների ուղղութեամբ անպայման ընտրելագոյնն է Ա-ը, որն և ծառայեց մեզ իրեւ բնագիր: Բ-ի ընթերւցուածները նշանակուեցան լուսանցքում: Ան հասել է մեր ձեռքը գրեթէ ամբողջ, թերի է մնում միայն վերջին յիշատակարանը, նորոգուած թերթե-

\* Տնի Դիլորիէ աղբամակը Recherches sur la Chronologie Arménienne, եթ 386:

\* Ուրեմն աշքի առաջ ունենալով: որ առ նուազ երկու տարում—է գրուել այս ճառընտրիը՝ կունենանք զրութեան մըծաւորագոյն թուականը ՈՂԵ—ՈՂԶ:

րով միասին ընդամենը 562 թերթ, Կան մի և նոյն թուանշանի անուշագիր կրկնութեամբ և կրկն թերթեր, որ կրում են հետեւեալ համարները. 242. 278. 280. 365. 435): Բ. Ն. ընդհակառակը, ունի թերթներ դատելով տետրերի կազմութիւնից պահառում են 1. 57, 58, 74 և 475—երրորդ թերթերը, Բացի այս՝ սկզբից պահառ հաւասարապարար կ ճառ և վերջից թերթառ, Այժմեան վերջին տետրից պահառ 2 թերթ, Վերջին թերթահամարն է 484:

—————

Ե. Յ. բոլորից յետոյ ինձ մնում է աւելացնել միայն մի քանի խօսք: Մատենագրական պյապիսի հետազոտութիւնները, անկախ իրենց ունեցած լոկ դրական նշանակութիւնից, ազգուշ են երբեմն նաև աւելի բնդհանուր կարեորութիւն ունեցող պատմական խնդիրների լուսաբանութեան վրա, Ընդունուած աւանդական տեսակէտները փոփոխութեան են ենթարկում մեր հայեցակէտը ընդայնում է, մուլթ խնդիրներ և պատմական որոշ շրջաններ նոր լոյս են ստանում: Ա. Յ. լինում է շատ անդամ նոյն իսկ անկախ հետազոտողի կամքից, եթէ միայն նա լոկ պատմական ճշմարտութեանն է հետամուտ, գործելով առանց նախառեալ կարծեաց և նպատակաւոր դիտաւորութեան կամ վերապահութեան: Կար ժամանակ—և շատերի համար այդ ժամանակը դեռ չէ անցել—երբ Ազաթանգեզոս, Զենոր Գլակ, Դաշանց Թուղթ և նման գրութիւններ համարում էին իրրե անյեղի պատմական և ճշմարտապատում աղբիւներ: Քննական ուսումնախրութիւնները մեղ առաջնորդեցին ուրիշ համոզման: Բայց կայ միւս ծայրայեղութիւնը, աւանդապահականի ճիշտ հակառակը—անպայման հերթականը: Դեպի այս ծայրը հակուղների կարծիքով բաւական է որ խախտուի որ և է հին յիշատակարանի որոշ մասերի վաւերականութիւնը, արդեն կորցրած է համարում այդ գրուածքը իւր րոլը արժէքը: Բայց այս նոյնպէս սիսալ է և կատարեալ թիւրիմացութիւն: Որևէ դրուածք պատմականից իջնելով կիսապատմականի, վիստականի շարքը, պյուսումնայնիւ չէ կորցնում իւր ներքին արժանիքը, մնալով միշտ իրրե լի զ ու ի և իւր ժամանակի աշխարհահայեցողութեան կենդանի պատկեր: Շատ անգամ նոր լուսաբանութիւնը դեռ աւելացնում է, քան թէ նուազեցնում այդպիսի դրական յիշատակարանի կարեորութիւնը: Ա. Յ. նոյնը պէտք է ասել իմ կարծիքով և Ազաթանգեզուի վերաբերամբ վաղուց նկատել են Գուշաշմիդն և այլք:

Կայ և մի ուրիշ կէտ: Մի կարգ պարզապիտ ների և տկարամիտների համար այսպիսի մերկացումները կարող են ունենալ և գայթակեցուցի կողմեր: Ակատուած է, որ շատ անդամ ռամկի մէջ սնահաւատութեան հետ կորչումէ և հաւատքը, Կայ և մի ուրիշ կարգ մարդկանց—չարամիտների, որոնք պատրաստ են իւրաքանչիւր մի այսպիսի դէպքում աղաղակ և փայնասուն բարձրացնել: Լոկ անձնական գիտումներով:

Փքուն և ուռուցիկ ազգային սնապարծական աւանդներից միշտ նախընտրելի է՝ առողջ պարզ կենդանարար ճշմարտութիւնը:

Սուրբն Գրիգոր Պարմե, մեր հաւատքի և լուսաւորութեան հայրը, վայրենութիւնից և վայրենամուռթիւնից մեղ գէսի քաղաքակրթութիւն գտողը, կոպիտ և խաւար նիւթապաշտութիւնից մեղ գէսի վերացականը: լուսաւորը և աստուածայինը առաջնորդողը, և և կմնայ միշտ անկախ իւր վարքագրութեան՝ ժամանակի բարեպաշտական ողու համեմատ յիշիւրուած՝ զարդերից և պաճուճներից, քրիստոսի նկեղեցու մեծ Արդապետներից մէկը, Հայաստանից Եկեղեցու առաջին Հայրապետը, Հայ աղջի Լուսաւորիչը: \*\*\*

Գալուստ Տէր Մկրտչեան

20 սնապեմբերի



\* Պորիայի եւ Շմոնայի Վայարանութեան բազիքը արդէն նրատարակութեալ Արարատի նախընթաց համարում:

\*\* Յարգելի բանասիրի այս ուսումնասիրութիւնը գետեղելով «Երարատ» մէջ՝ պարտը ննի համարում յայտնել, որ մենք ամեն ևին համարածայն չենք նրա եղանակացութեան մէջ արդէն նկեղեցական դրականութեան մէջ արդէն իսկ յայտնի են վարդագրութիւնները իրենց ձևական նմանութեամբ: այսպիսի ձևական նմանութիւններ ենք համարում մնաք և ասորի վարդագրութեան և Ազաթանգեզոսի միջն և զած նմանութիւններն են: Եյս հանգամաններն Ազաթանգեզոսի վերաբերամբ վաղուց նկատել են Գուշաշմիդն և այլք:

Ծան: Խմբագ.